

Բանասեր. Հանդես հնարասական և պատմական լեզուարանական և բնական. Հատոր Առաջինը. Ա. գիրքը. 1899. Պարիս.

Պ. Բամամջեան Բանասիրի հրատարակութեամբ հայագիտութեան համար աշխատելու մի շատ կարևոր ասպարէզ է ընտրել՝ հրատարակել

1. մեր ազգային հնարասութեան պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ հետազոտութիւններ, արդի քննական տեսութեանց համեմատ.

2 «Հայկական պարսկական ասուրական (Ասորեստանեաց) բարեւոյնան շրջական (Ելեմացուց) բեհապարաց» այն մասերի թարգմանութիւնը, որ հայոց է վերաբերում.

3 Ձեռագիրների ցուցակներ՝ վիեննացիների հետևողութեամբ.

4 «Հայերէն լեզուի ձայնարանութեան և ստուգարանութեան վերաբերեալ և դաւառաբարբառներու ուսումնասիրութիւններով ըզբազիլ»:

Այս ծրագրի համեմատ, վիմագրութեամբ, հրատարակուած է արդէն առաջին հատորի առաջին գիրքը, որից և կարող ենք գաղափար կազմել ձեռնարկած գործի կարևորութեան մասին: Առաջին և կարևոր յօդուածներէն մէկն է պ. Բամամջեանի «Պարբհի արշաւանքն և Հայո» վերնագրով յօդուածը: Հեղինակը նախ Պարբհի այլ և այլ արձանագրութիւններէ հիման վերայ բացատրում է մեր երկրի նախկին անուանադրութիւնը, համառօտ տեսութիւն է անում նորա նախապատմական շրջանի մասին և ապա է Պարբհի երեք արձանագրութիւնները՝ Պերսեպոլիսի, Նաքշի Ռոստամի գերեզմանոցի և Բեհուստանի ժայռի — ընագիրներով, ընթերցումներով և թարգմանութեամբ:

Այնուհետև միմեանց հետևում են հետևեալ յօդուածները. Մեհասան Մանուկի թարգ. յուն Ս. Յ.—Հայոց դիրք Արաց քաղաքաշինական մէջ Պրոփ. Խախանովի. Հայերէնի ներդաշնակութեան աստիճանը քաղաքական հաշուով—Հ. Աճառեանի. Տերսիցիի կայծոռիկի. Յուց. կայերէն ձևագրաց ազգային մասնագիտական Պարիսի, շարունակելի Կ. Յ. Բ. Մովսիսի Խորենացոյ Հայոց Պատմութիւնը ուղղագրեալ և ծանօթարանեալ—Սուքիաս վարդ. Պարոնեանի. Մասնագիտական նոր հրատարակութիւնը և Չայն Միջերեան տիեզէ՛ Տիկ. Փրեզբիկ Միւլլերի մի նամակը:

Ասանձին ուշագրութեան արժանի են Պ. Աճառեանի և Հ. Պարոնեանի յօդուածները: Պ. Աճառեանը զարմանալի համբերութեամբ զանազան գրքերի հատուածների տառերը հաշուելով նոցա գործածութեան տախտակն է կազմել հայոց լեզուի մէջ: Իսկ Հ. Պարոնեանը մի մեծ

գործ է սկսել. ոչ միայն ուղղագրել Խորենացու ներկայ ընագիրը, այլ և պարզել հեղինակի անձի և ժամանակի վերաբերեալ մատենագրական խնդիրներ: Հ. Պարոնեանը սրբան սրամիտ ու գիտնական բացատրութիւններ և սրբագրութիւններ աւելու լինի, բայց և այնպէս մեզ համար աւելի պահատ նշանակութիւն կունենան նորա եղբակացութիւնները, քանի որ ձեռագիրների համեմատութեան վերայ չեն կատարուած: Աւրախալի է այն լուրը, թէ Բանասիրի մէջ պիտի հրատարակուի Հ. Պարոնեանի շահեկան մեծ գործը՝ Մասնագրակիր, որի վերայ քսան տարուց է վեր աշխատում է հ. գիտնականը:

Լոյս է տեսել Պ. Մառի մաղխարոսական եռահատոր մեծ շարագրութիւնը՝ Сборники Прутчъ Вардана, Материалы для Исторіи средневѣковой Армянской Литературы. I. II. III. С.-П. Այս նշանաւոր աշխատութեան մասին կիսօրենք ուրիշ անգամ:

Մեր միաբանակից և ընկեր Հ. Տերայր վարդապետը թարգմանել է և տպագրութեան համար պատրաստ ունի պ. Եղեանցի Сношения Петра Великаго съ Армянскимъ народомъ գրքի յառաջարանը, այսինքն պ. Եղեանցի ուսումնասիրութիւնը փաստաթղթերի վերայ հիմնուած: Յեղորական վարչութիւնից իրաւունք ստանալուց յետոյ կսկսուի գործի տպագրութիւնը:

Գ. Վ. Յովսէփեան

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Ապակի գործուածքներ.—Եզրկտոսի ապակու հին գործարաններում գեո Բրիտտոսի ծննդից զարեր առաջ կարողանում էին ապակուց թել քաշել, իսկ նոյն նիւթից թելեր մանելու արդի նոր եղանակը փոխ է առնուած Աննետիկի ապակու նախկին արհեստանոցներից, Այդ վարպետութիւնը, ինչպէս յայտնի է, նրա մէջն է կայանում, որ ապակէ ձողիկի կրակի վերայ տաքացրած ու փափկացրած ծայրը ամրացնում են մանող անուի մի որ և է մասին և իսկոյն արագ պտտում են անիւը: Այդպիսով ապակէ ձողիկից բարակ թել է ստացուում որը շատ շուտով ստաչում է օդի մէջ ու փաթաթուում անուի շուրջը:

Մի քանի տասնեակ տարի սրանից առաջ արդէն գոյութիւն ունէին այնպիսի մետաքսէ գոր-

ծուածքների որոնք մէջէ մէջ ուտանանկուած էին լինում ապակէ թելերով, նապուէտն Ա-ի շիրիմը ծածկուած է մի հաստ մետաքսէ օթոցով որը հիւսուած է ապակէ սկեզոյն թելերից: Բաւարիայի Լուդովիկոս Ա. թագաւորի պալատի սենեակներից մէկի պատերի ծաղկաթղթերն էլ ապակէ թելերից էին շինուած: Բայց որովհետեւ այդ գործուածքի թելերն այնքան դիւրարեկ էին, որ սենեակում յաճախ ապակու մանր կտորներ էին թափթփուած լինում: այդ պատճառով թագաւորը շէր սիրում այդ սենեակը մտնել:

Ֆրանսիացի քիմիկոս Ժիւլ—զը—Բրիւնֆոնն, որ ծնուել է 1819 թուին, շատ փորձերից յետոյ, վերջապէս կարողացաւ մի առանձին տեսակի ապակի պատրաստել, որից կարելի եղաւ այնչափ փափուկ ու խառտ թել մանել, որ երբ նա առաջին անգամ Շաէյերմարկում ի ցոյց դրեց, Ֆրանսիացի խաշնարոյծները ամենանուրբ բուրդ կարծեցին:

Այսպէս ուրեմն գտնուեցաւ այն դաղանիքը, որով հնարաւոր դարձաւ ապակու ձկուն թելեր մանել, որոնք հեշտութեամբ թէ ներկուած են և թէ այրուելուց զերծ են մնում: Սակայն Բրիւնֆոնի այս փորձերը շուտով մոռացութեան մատնուեցան և միայն վերջերքս Ամերիկայում սկսեցին նրա գիւտից օգուտ քաղել:

Զիկագոյի համաշխարհային ցուցահանդիսին, ի միջի այլ արժանայիշատակ իրերի, այցելուները առաջին անգամ բախտ ունեցան ապակէ գործուածքների պատրաստելու աշխատանքներին ներկայ զետնուել, Ապակուց գործուած թաշկինակներն ու ցփսիներն այն աստիճանի ձկնութիւն ու փափկութիւն ունէին, որ դժուար էր որոշել բրդէ և կամ մետաքսէ կտորներից, Ամէն գոյի վարագոյրներն, ծաղկաթղթերն, նկարէն գորգերն ու անձեռոցիկներն իրենց տեսքով ու նրբութեամբ նոյն սպաւորութիւնն էին թողնում: Ինչ զգում է մարդ բրդեղէն և կամ մետաքսեղէն շօշափելիս:

Եւ թէև այսպիսի ապակէ դիպակներն առ այժմն չապշուրթեան առարկաներ են համարուած և միևնոյն ժամանակ շատ էլ թանկ են գնահատուած, սակայն կարելի է յուսալ, որ մի օր նրանք մշակութեան ընդարձակ ասպարէզ ձեռք կրերն և մատչելի կլինին ընդհանուրի առօրեայ գործածութեան, աչքի առաջ ունենալով նրանց ակնյայտնի առաւելութիւնները, այն է՝ գեղեցիկ տեսքը, շայրուիլը և չթռչուիլը:

\* \*

Սիրիի գեղարտի սրտողների կողմնացոյցը.—Սիրիի գիւղական օրսորդներն արուեստական կողմնացոյց գործածելու կարիք ամենևին չեն զգում: շնայելով որ շատ անգամ օրսի ժամանակ ստիպուած են լինում Սիրիի խիտ ու կուսական անտառների

խորքերը մտնելու, նրանք երբէք երկիւղ չեն կըրում: Թէ կարող են երբ և իցէ մուրրուել անտառներում, մինչև անգամ տարուայ ամենալատ եղանակներին և կամ ամպամած օրերին, որովհետեւ անտառի կողմնացոյց, որը նրանց թափառական կեանքի մշտական լուսատու աստղն է:

Այս հրաշալի կողմնացոյցն ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակ «մամուռ»-ը, որ միշտ քարերի ու փշտտերե ծառերի հիւսիսային երեսի վրայ է բուսած լինում, և մայրի ծառերի շղարագացած, երկար ու անփուշ ձիւղերը, որոնք նոյնպէս հիւսիսային կողմն են դարձած լինում:

\* \*

Նամակագրութիւն շան նեւ.—Շների կեանքից շատ ու շատ յայտնի դէպքեր կան, որոնց մէջ այդ հաւատարիմ կենդանիներն իսկապէս որ արտակարգ խելքի նմուշներ են ցոյց տուել, բայց յետագայ փաստը, անկարծիք, բոլոր հետաքրքրական դիպուածներից ամենից ուշագրաւը պիտի լինի:

Մի ընտանիքի անդամներ, սրանից մի քանի տարի առաջ Անգղիայից Ամերիկա գաղթելով, իրենց սիրելի շանն ազգականների մօտ թողին: Պանդուխտներն անընդհատ թղթակցում էին իրենց բարեկամների հետ, իսկ սրանք պատասխանելիս միշտ էլ չէին մոռանում յիշելու, որ շունը շատ է սրանեղում և կարծես թէ նրանց կարօտն է քաշում: Ահա այդ ժամանակ օտարականները մտածեցին մի հետաքրքրական փորձ փորձել իրենց շան հետ յարարելութիւն սկսելու, նուրբ կտաւից փոքրիկ քառակուսիներ կտրտեցին ու մի քանի օր իրենց գըրպաններումը պահեցին: Այդ կտորներից մէկն իրենց նամակի մէջը դնելով, ուղարկեցին ազգականներին և յայտնեցին իրենց դիտաւորութիւնը, Շան նոր տէրերը նամակը կարդալով, կանչեցին նրան ու կտաւի կտորը առաջը դրին, Շունն երկար ժամանակ կանգնեց շորի դիմացը, յետոյ պտտեց նրա շուրջը, լիզեց և վերջապէս գլուխն իր նոր տիրոջ ծնկան դնելով, սկսեց ոռնալ ու առատ արտասուք թափել աչքերից, Հետեւեալ օրը շունը թաթով շարժում էր անեցիկներից պատահողին և կարծես դրանով ուզում էր յայտնել իր խնդիրը: Հասկացան նրա միտքը ու կտաւի կտորը առաջը դրին, Եւ այսպէս շարունակուած էր ամէն օր այս սրտաշարժ տեսարանը:

Պանդուխտները չէին ընդհատում իրենց նամակագրութիւնը և ամէն շաբաթ մի կտոր կտաւ էլ իրենց շանն էին ուղարկում: Իսկ շունն այնքան վարժուեցաւ այս ձևի նամակագրութեան եղանակին, որ անհամբեր սպասում էր, թէ երբ է սուրհանդակը գալու: Ծրարը տեսնելուն պէս, նա մօտ էր վազում ու սխտում էր հաջել, Իսկ երբ բաց էին անում ծրարը, նա իսկոյն ստանում էր

իր նամակը՝ կտաւի կտորը, և սկսում էր հետը  
խաղալ, իսկ վերջը լաց լինել:

\*  
\*\*

Ինչպես սկզբնաւորական պատմութիւնը — Գե-  
ղասան հայրենիքը Բաղդադն է համարուում: Այդ-  
տեղ, դեռ Քրիստոսի ծննդից 754 տարի առաջ, Ալ-  
մանսուր խալիֆան առաջին ղեկաւորները բացել:

Շուտով դրանից յետոյ վրայ հասաւ մի այն-  
պիսի ժամանակ, երբ թաղաւորներն անգամ սկը-  
սեցին ղեկազորական փորձերով պարապել: Հիւզօ  
Մաուրակիներըս իւրոս ընծայած „Das Charakterbild  
des Apothekers in der Litteratur“ գրքից իմանում  
ենք, որ Վամբիւան իր օժանկիքներն ինքն էր  
եփում ու պատրաստում իսկ Պերգամացի Ատալն  
սպեղանի էր շինում կապարից ու սնգոյրից, Յայտ-  
նի է նմանապէս, որ այդ ժամանակուայ ղեկազոր-  
ները շատ լաւ գիտէին իրենց արուեստին վերաբե-  
րեալ բոլոր նրբութիւնները:

Քրիստոսի ծննդեան ժամանակներից սկսած  
արդէն գործադրում էին նմանարուժական (гоме-  
опатія) միջոցները:

Յունաստանում առհասարակ ղեկազորներն  
ընդհանուրի յարգանքը չէին վայելում: Լիկուրգո-  
սը մինչև իսկ օրէնք հրատարակեց, որի դօրութեամբ  
Լակեզեմնիայից նրանց դուրս քշեցին իրենց կա-  
տարած մի քանի ամօթալի արարքների համար:  
Եպիկուրը գատապարտում էր Արիստոտէլին, որ  
նա ղեկազորների այդ անպատուարեք գործովն  
էր դրաղուում:

Սակայն ղեկազորների հետ ամենից աւելի  
վատ էին վարում Հուովմում: Օրինակ, Հորացիոսը  
նրանց լարախաղացների ու մուրացկանների հետ է  
համեմատում:


Գեղազորների անկեալ վիճակի բարելաու-  
թիւնը դարձեալ Արևելքի ազդեցութեան պէտք է  
վերագրել, որտեղ իրօք կարողանում էին գնահա-  
տել նրանց գործունէութիւնն ու հմտութիւնը, Ա-  
րարացիները ղեկաւորները Եւրոպայ տեղափոխեցին, և  
այն ամենից առաջ Սպանիայ, որտեղից անցաւ  
Իտալիայ: Արուեստների այս երկրում ղեկազոր-  
ների համար էլ ամենափայլուն շրջանն է սկսուում:  
Նրանք առանձին համայնք էին կազմում և ունէին  
իրենց յատուկ դրօշակն ու կնիքը:

Գերմանիայում ղեկաւորների մասին առաջին  
անգամ յիշատակութիւն է լինում Թ.Գ. դարի  
առաջին կիսում: Իսկ հարաւային և արևմտեան  
Գերմանիայում մինչև Թ.Գ. դարը ղեկաւորն անե-  
լով հասկացուում էր ամէն մի մանրալաճառի իտա-  
նութիւն:

\*  
\*\*

Ի՞նչպէս ունեցնել ծաղկամանների ձիւններին:  
— Սենեակներում ծաղիկներ և կամ ուրիշ քնքոյշ  
բոյսեր պահողները շատ անգամ խիստ նեղն են  
ընկնում և չեն իմանում թէ ինչպիսի միջոցների  
գիմեն, որ կարողանան իրենց սիրած ու փայփայած  
ծառերն ու ծաղիկներն ազատել այդ ճիճուներից,  
որոնք անպայման վնասակար են ծաղկամանների  
մէջ աճող բոյսերի համար: Այդ շարիքի գէմ  
գործադրուող զանազան յայտնի միջոցներից ամենից  
աւելի ուշագրութեան արժանին „Sardin“ լրագրի  
առաջարկածն է: Պէտք է վերցնել միւս շագանակ  
(վայրենի շագանակ) ու մանր կտրտել և ապա մի  
ամբողջ օր թրջոց դնել: Մի գորակ ջրի համար  
տասը շագանակ բաւական է:

Այս կերպ պատրաստուած ջրով ջրում են  
ծաղկամանները, մինչև նրանց հողը լաւ կշտանայ:  
Շաղանակի ջուրը չնչին վնաս անգամ չի կարող  
պատճառել նոյն իսկ ամենաքնքոյշ ծաղիկներին,  
այն ինչ հողի ճիճուների վրայ ազդու ներգործու-  
թիւն է անում: այնպէս որ մի անգամուայ ջրէլը  
սովորաբար բաւական է համարում վերջնականա-  
պէս նրանց ջնջելու համար: Անմիջապէս ճիճուները  
հողի երեսն են դուրս գալիս և տեղն ու տեղը  
սատկոտում են:



ՅԵՒՆԼՈՒԹՅԱՆ ԱՐԵՐԱՏԻ 1899 Թ. ՅՈՒՆԻՍՄ.

**ՊԱՏՄԱԿԱՆ — ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ**

ՈՒՍՈՒԹՄԵՆԱՅԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

I.

ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ

(Լ. ՂԱՄ).

(Շարունակութիւն) \*

Գ.

Մտինթոյ պրակի մէջ Խոսրովի զրբի  
համառօտ բովանդակութիւնից տեսանք, որ  
հեղինակը, որպէս ժամանակակից և գործին  
մասնակից անձնաւորութիւն, նկարագրում  
է պատմական նշանակութիւն ունեցող կա-  
րևոր երևոյթներ: Բայց զրական երկերի